

<p>Կազմակերպության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս 	<p>«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908</p>
<p>Ջեռագոտության թեմա/վերնագիր</p> <ul style="list-style-type: none"> • Ջեռագոտության թեմա 	<p>Ինքնագնահատականի դերն ու կարևորությունը դեռահասների մոտ միջին դպրոցում</p>
<p>Ուսուցչի տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ 	<ul style="list-style-type: none"> • Գաբրիելյան Գոհար Կառլենի • Ուսուցիչ • 093192070 • gohargabrielyan323@gmail.com • Հայոց լեզու և գրականություն • 5-րդ, 7-րդ, 10-րդ, 11-րդ
<p>Ուսումնական հաստատության տվյալներ</p> <ul style="list-style-type: none"> • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե <p>(տնօրենության)</p> <ul style="list-style-type: none"> • Web կայքի հասցե 	<ul style="list-style-type: none"> • Այգեզարդի Ա. Ղարիբյանի անվան միջնակարգ դպրոց • 093592243 • aygezard@schools.am

Բովանդակություն

Ներածություն.....	3
Հիմնական բովանդակություն.....	4
Դեռահասության շրջանին բնորոշ առանձնահատկությունները.....	4
Ինքնագնահատականի դերն ու կարեվորությունը դեռահասների մոտ.....	6
Հետազոտության ընթացքը.....	7
Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	8
Գրականության ցանկ.....	10
Հաշվետվությանը կցված նյութեր.....	11

Ներածություն

<p>Նպատակը եւ հետազոտական հարցը</p>	<ul style="list-style-type: none">● Հետազոտության նպատակն է ընդգծել ինքնագնահատականի դերն ու կարևորությունը դեռահասների համար միջին դպրոցում և վերհանել դրա դրական և բացասական ազդեցությունները դպրոցական գործունեության վրա:● Հետազոտության նպատակից բխում են հետևյալ խնդիրները.<ul style="list-style-type: none">✓ Առանձնացնել դեռահասության շրջանին բնորոշ առանձնահատկությունները:✓ Վերհանել դեռահասի ինքնագնահատականի ձևավորմանը նպաստող դրական և բացասական գործոնները: <p>ՀԱՐՑ – Ինչ դեր և կարևորություն ունի ինքնագնահատականը դեռահասների մոտ միջին դպրոցում Այգեգարդի միջնակարգ դպրոցի օրինակով:</p>

<p>Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարող ունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը</p>	<p>Նպատակի ուսումնասիրությունը ուղղված է հետևյալ կոմպետենցիաներին.</p> <ul style="list-style-type: none"> • շփման հմտությունների կոմպետենցիային • ինքնաճանաչողական և սոցիալական կոմպետենցիային
<p>Ջետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/</p>	<ul style="list-style-type: none"> ● Ջետազոտությանը մասնակցել է Այգեգարդի մ/դ-ի 7-րդ դասարանի 30 աշակերտ (15 տղա, 15 աղջիկ):
<p>Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)</p>	<ul style="list-style-type: none"> ● Այգեգարդի միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանում իրականացրել ենք քանական հետազոտություն՝ կիրառելով գրույցի և թեստավորման մեթոդները:
<p>Ջետազոտության իրականացման ժամանակահատվածը</p>	<p>04. 09.2023-08.09.2023թթ.</p>

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ

- Մեջբերումներ արդեն արված

հետազոտություններից,

- Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:

Պարտադիր է կատարել

հղում աղբյուրին

Դեռահասության շրջանին բնորոշ առանձնահատկությունները.

Դեռահասության տարիքը (12-14 տ.) համարվում է մարդու կյանքի և ընդհանուր զարգացման ամենագլխավոր շրջանը, որը նաև մասնագետները անվանում են "ճգնաժամային տարիք": Սեռական հասունության պայմաններում անձի ֆիզիկական, կենսաբանական ինտենսիվ փոփոխությունները հանգեցնում են հոգեբանական

Նորագոյացումների: Առհասարակ դեռահասության տարիքը ընդունված է համարել դժվար կամ ճգնաժամային շրջան, քանի որ այս տարիքում են ձևավորվում մարդու աշխարհընկալման, աշխարհայացքի և առհասարակ առաջնային արժեքների համակարգը, նախնական բլոկը: Դեռահասի պարագայում անհրաժեշտ է հիշել, որ ֆիզիկական տվյալներով չափահասից չտարբերվող, սակայն հոգեբանորեն ավելի ցածր զարգացման մակարդակի վրա գտնվող անձի մասին է խոսքը: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ սեռական հասունության էտապում մարդու ֆիզիկական զարգացումը աննախընթաց արագ աճ է արձանագրում, իսկ հոգեբանական առումով նրա զարգացումը պահանջում է ավելի շատ ժամանակ:

Կարելի ընդհանրական կերպով առանձնացնել դեռահասի կենսաբանական Նորագոյացություններից մի քանիսը.

- Սեռական հասունացում
- Երկրորդային սեռական հականիշների ի հայտ գալը
- Հասակի և քաշի կտրուկ ավելացում
- Ձայնի փոփոխություն
- Մկանային և անոթային տոնուսի անկումները

● Մաշկի և դիմագծերի հետ կապված փոփոխություններ

Յոգեբանական փոփոխություններ.

Այս շրջանում անչափահաս սկսում է ակտիվորեն վերաիմաստավորել իր նախկին մոտեցումները, փորձում է դուրս գալ ավագ հարազատների ազդեցության ոլորտից, սկսում է հաճախ նրանց հակառակվել, նկատել նրանց մեջ բացասական գծեր, որոնք մինչ այդ չէր նկատում, ձգտում է անկախության, ինքնուրույնության և ինքնահաստատման, մյուս կողմից նրա համար շատ ավելի արժեքավոր է դառնում իր տարեկիցների կարծիքը, փորձում է հարմարվել նրանց կողմից ընդունված նորմերին և հաստատվել իր տարեկիցների միջավայրում:

Բաղմանի խոսքով, «դեռահասության տարիքը ամենաբարդն է մանկավարժների և ծնողների համար, և ամենաճգնաժամայինը հենց դեռահասների համար է: Դեռահասների դևիանտ վարքը բազմաթիվ տհաճություններ է պատճառում ոչ միայն անմիջական դաստիարակներին, ուսուցիչներին, այլ նաև ամբողջ կրթական-դաստիարակչական, ինչպես նաև օրինապահ համակարգերին:

Դեռահասության փուլում՝ միջին դպրոցում, ուսումնական գործունեությունը դադարում է զարգացման վրա թողնել այն ազդեցությունը, որն ուներ կրտսեր դպրոցական փուլում: Առաջատար գործունեություն է դառնում հասակակիցների հետ շփումը, մեծահասակներից հոգեբանական հեռացումը, որը հաճախ ուղեկցվում է կոնֆլիկտներով:

Ինքնագնահատականի դերն ու կարևորությունը դեռահասների մոտ.

Ինքնագնահատականը մարդու ինքնագիտակցության բաղկացուցիչ մասն է, որի

միջոցով անհատը գնահատում է սեփական կարողությունները, հմտությունները, արժանիքները և թերությունները: Ընդհանուր ինքնագնահատականը կազմվում է մասնավոր ինքնագնահատականներից, որոնք վերաբերում են անհատի գործունեության մի որևէ բնագավառի կամ որակների առանձին խմբի: Տարբերակում են ֆիզիկական, մտավոր կարողությունների, բնավորության և այլ ինքնագնահատականներ:

Ինքնագնահատականի ծնե ձեռք բերած որակ չէ, այն ձևավորվում է գործունեության և միջանձնային հարաբերությունների միջոցով: Զասարակությունը և միջավայրը մեծ չափով ազդում են անհատի ինքնագնահատականի ձևավորման վրա:

Դեռահասը դպրոցում անցկացրած մեկ օրվա ընթացքում ենթարկվում է շարունակական և համակարգված գնահատման: Այստեղ նա միաժամանակ գնահատման առարկա է դառնում ինտելեկտուալ, սոցիալական և ֆիզիկական կարողությունների և հնարավորությունների տեսանկյունից: Դպրոցում է, որ նրա ձեռքբերումներն ու անհաջողությունները դառնում են պաշտոնական, անընդհատ արձանագրվում ու հրապարակայնորեն ասվում:


Միջին դպրոցում դեռահասների հաջողությունների ակնհայտ տարբերությունները կապված են նրանց ինքնագիտակցության տարբերության հետ, ներառյալ ինքնագնահատականը, որպես ինքնորոշման բաղկացուցիչներից մեկը:

	<p>Երեխաները, որոնց պատկերացումներն իրենց ուսումնական կարողությունների մասին թույլ չեն տալիս բարձր ձեռքբերումներ ունենալ, սովորաբար գիտակցում են այդ գաղափարները և վատ են սովորում: Ընդհակառակը, բարձր ինքնագնահատականով և</p> <p>իրենց ուսումնական կարողությունների վերաբերյալ դրական համոզմունքներ ունեցող երեխաները հակված են շատ ավելի լավ դպրոցական առաջադիմություն ունենալ:</p>
	<ul style="list-style-type: none"> ● Այգեգարդի միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանում 04.09.2023թ-08.09.2023թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել ենք հետազոտություն՝ կիրառելով գրույցի և թեստավորման մեթոդները: ● Չետազոտությանը մասնակցել է 30 աշակերտ (15 տղա, 15 աղջիկ): ● Որպես հիմնական մեթոդիկա կիրառվել է <<7-9-րդ դասարանների աշակերտների ինքնագնահատականի որոշման մեթոդիկա>> թեստը՝ մշակված Ա. Ռ. Ախատոնովայի կողմից:

**Վերհանված արդյունքներ,
Եզրակացություններ,
պատասխան
հետազոտական հարցին**

Կիրառված մեթոդիկայի արդյունքներից պարզ դարձավ, որ հարցվածներից 10-ը` 33%-ը ունեն գերբարձր ինքնագնահատական, 6-ը` 20%-ը ունեն ադեկվատ ինքնագնահատական և 14-ը` 47 %-ը ունեն ցածր ինքնագնահատական:

Ստացված արդյունքները դիագրամի տեսքով ներկայացնում ենք Դիագրամ 1-ում:



Դիագրամ 1.

Չրույցի մեթոդի կիրառման ժամանակ երեխաներից յուրքանչյուրի հետ քննարկվեցին մեթոդիկայի արդյունքները: Ստացվածից պարզ է դառնում, որ ցածր ինքնագնահատական ունեցող դեռահասների մեծ մասը ունեն նաև ցածր առաջադիմություն և բարձր ինքնաքննադականություն, իսկ բարձր ինքնագնահատական ունեցող դեռահասները գրանցում են միջին և բարձր առաջադիմություն և դրսևորում են ոչ խիստ քննադատականություն սեփական անձի նկատմամբ: Իսկ ադեկվատ ինքնագնահատական ունեցող երեխաները (որոնց

մեծ մեծամասնություն էին կազմում աղջիկները), ունեն միջին և բարձր առաջադիմություն, աղեկվատ ինքնաքննադատականություն և հավակնությունների բարձր մակարդակ:

Այն հարցին, թե դեպրոցական գոծունեության ընթացքում ինչը կարող է նպաստել իրենց աղեկվատ ինքնագնահատականի ձևավորմանը, որը նաև կնպաստի առաջադիմության մակարդակի բարձրացմանը, երեխաների մեծ մասը նշեցին.

- ուսուցիչների դրական, ընկերական վերաբերմունքը
- ճիշտ խրախուսանքի հաճախակի կիրառումը
- հասակակիցների հետ հարաբերություններում համերաշխությունը և կայունությունը
- ընկերական արժեքները

Այսպիսով, ուսումնասիրելով համապատասխան գրականություն և հետազոտության արդյունքները վերլուծելով՝ կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

- Դեռահասությունը եղել է և մնում է անձի ձևավորման կարևորագույն փուլը
- Դեռահասի ինքնագնահատականը անմիջականորեն կապված է ուսումնական առաջադիմության և հավակնությունների մակարդակի հետ
- Դեռահասա-դեռահասա, դեռահասա-ուսուցիչ հարաբերությունները էական դեր են խաղում աղեկվատ ինքնագնահատականի ձևավորման և պահպանման գործում:

Անկախ ամեն ինչից, դեռահասության տարիքում գտնվող անձը մշտապես ունենում է աջակցության կարիք: Դեռահասության փուլը ամառվել հարթ դարձնելու և այս փուլում երեխաների ուսումնական

	<p>մոտիվացիան չնվազեցնելու նպատակով առաջարկում ենք.</p> <ul style="list-style-type: none"> ✓ հաճախակի կազմակերպել արտադասարականական քննարկումներ դպրոցի հոգեբանի անմիջական մասնակցությամբ, որոնք ուղղված կլինեն ինքնաճանաչողությանը, ✓ ուսուցիչ-դասարան կոնտեքստում ունենալ հստակ տարեկան նպատակ, որը կսահմանվի աշակերտների հետ միասին և իր մեջ կներառի և՛ ուսուցչի և՛ աշակերտների սպասելիքներն ու ակնկալիքները, ✓ կազմակերպել բաց քննարկումներ, որոնցում ներառված կլինեն նաև դեռահասների ծնողները:
Այլ տեղեկատվություն	

Գրականության ցանկ

1. [Խուդոյան Ս. Ս. Անձի զարգացման ճգնաժամային տարիքները.-Եր.: Չանգակ-97. 2004.-248 էջ](#)
2. <https://infourok.ru/uspehi-v-uchebe-i-samoocenka-podrostka-3649338.html>
3. <https://www.doctors.am/derahasutyun>
4. <https://mel.fm/deti/shkolniki/7216458-neschastlivyye-i-neuverennyje-kak-obeshchstvo-vliyayet-na-samootsenku-detey-s-disleksiyej>
5. <https://ped-kopilka.ru/blogs/rima-ahatovna-afanaseva/testy-dlja-proverki-samocenki-uchaschih-sja-srednei-shkoly.html>

Յաշվետվությանը կցված նյութեր

Յավելված 1.

7-9-րդ դասարանների աշակերտների ինքնագնահատականի որոշման մեթոդիկա

Յեղինակ՝ Ա.Ռ. Ախատովնա,

Պատասխանում ենք հարցերին՝ «այո» (+), «ոչ» (–)

1. Դուք համառորեն և առանց վարանելու կատարում եք ձեր որոշումները՝ կանգ չառնելով դժվարությունների առաջ:
2. Ի՞նչ եք կարծում, հրամայելը և առաջնորդելը ավելի լավ է, քան հնազանդվելը:
3. Յամեմատած մարդկանց մեծամասնության հետ՝ դուք բավականին ընդունակ և խելացի՞ եք:
4. Երբ ձեզ հանձնարարում են առաջադրանք, դուք միշտ պնդո՞ւմ եք դա անել ձեր ձևով:
5. Միշտ և ամենուր ձգտո՞ւմ եք լինել առաջինը:
6. Եթե լրջորեն զբաղվեիք գիտությամբ, վաղ թե ուշ պրոֆեսոր կդառնայիք:
7. Դժվա՞ր եք ինքներդ ձեզ «ոչ» ասել, նույնիսկ եթե ձեր ցանկությունն անհնարին է:
8. Կարծում եք, որ կյանքում շատ ավելիին կհասնե՞ք, քան ձեր հասակակիցները:
9. Ժամանակ ունե՞ք ձեր կյանքում շատ բան անելու, ավելի շատ, քան մյուսները:
10. Եթե ստիպված լինեիք ձեր կյանքը նորից սկսել, շատ ավելիին կհասնե՞ք:

Արդյունքների մշակում.

Չափվե՞ք «այո»-ի թիվը (+):

6-7 (+) - բարձր ինքնագնահատական;

3-5 (+) - համարժեք (ճիշտ);

2-1 (+) – թերագնահատված